



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

0-34

ԱՐԵՎԱՆԻ ԹԱՏՈՒՐԵԼՈՒ



ԳՐԱԴԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՐԵՎԱՆԻ  
ԹԱՏՈՒՐԵԼՈՒ

P.M.  
-5942

Mr. V. V. V. V.  
19 NOV 1911  
GPO 55 cent


891.99

8-34

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏՈՒՐԵԱՆ

891.99 40766-63  
8-34

## ԳՐՉԻ ՀԱՆԱՔՆԵՐ



ՄՈՍԿՈՒԱ  
ՏՊԱՐԱՆ ք. ԲԱՐԻՆՈՒԴԱՐԵԱՆ  
1901.

14 MAY 2013


35710

Дозволено цензурою, С.-Петербургъ, 31 Января 1901 г.



40766-63

Тип. Х. Бархударовой, Москва, Срѣтен., Мясной пер., д. Бѣляева.



Գընա, իմ զըրքիկ, այ զըրչիս հանաք,  
Խօսիր մարդկանց հետ դու հանաքներով.  
Շատերի սըրտին կըլինես դանակ...  
Շատերն էլ, գուցէ, կունդունեն սիրով:

## ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

Ամեն ազգումն էլ — ով չըդիտէ այդ —  
Որ կան հարուստներ՝ յայտնի ու անյայտ,  
Եւ նաև է ազգում մեծ անուն հանում,  
Ով մեծ ցաւերն է ազգի զարմանում:

Միայն մեր կեանքում — զարմանալի՛ բան —  
Պատիւ է խընդրում ամեն լիք զըրպան.  
Եւ կան Կրկոսներ՝ մեծ անուն հանած,  
Բայց ազգի օգտին կորեկ չեն ցանած . . .



Թ Ա Խ Ք Ը

Ասում են -- թուքը պյժ է զօրաւոր,  
Մարդուն կարող է իր պատուից զըցել.  
Բայց տեսէք, մեր մէջ... նա է պատուաւոր,  
Ով միշտ երեսը թըքովն է լուացել...



ՄԵԾ ՎԻՇ

Ասա՛, հայ աղջիկ, ի՞նչի ես արրտում,  
Ի՞նչ ցաւ ու դարդ կայ քո մատաղ սըրտում  
Ի՞նչի ես այդպէս յուսահատ լալիս,  
Մաղերը փետում գըլիխիդ վայ տալիս.  
Սրգեօք քո ընտրած սիրահաճն է քեղ  
Անողորմ խոցել ու դարձրել երես...  
Թէ անդին ծնողքի կամ ազիզ եղբօր  
Մահն ես դու ողբում՝ այդպէս սըզաւոր...  
Սրգեօք այս արևուր, այս սե օրերին  
Քո զըժրախտ ազգի ցաւերն են խորին  
Քեղ այդպէս յուղել պըզառել հոգին,  
Խըլել քո դէմքերց կուսական ժըպիտ...

Ասա՞ ինձ, ասա՞, քո սըստի գաղտնիք,  
Գուցէ, քո յաւին մի Ճար կայ, աղջե՞կ...  
— «Ա՛խ, մի ժամից յետ հիւր պիտի զընամ,  
Կցսը հառաչեց՝ արցունքն աչերում.  
«Իսկ դերձակուհիս—այդ կինն անզգամ—  
«Դեռ մինչև հիմայ շոլըս չերում...»:

ՄԵԾՈՒԹԵԱՆ ԱԹՈՒ

Ես զիտեմ կեանքում աթոռ մեծութեան.  
Խաչեր ու աստղեր շարէշար վիրան...  
Ով այդ աթոռին հասնել ուղենայ,  
Երկու յատկութիւն պէտք է ունենայ—  
Մեծի առաջեւ խոնարհուի դողալ...

## ՀԱՅ ԳԱՀԱՆԱՅ

Մանրավաճառի նա խանութմ բացեց,  
Ծախում էր կոճակ, ասեղ ու մաստակ,  
Բայց առուտուրին խելքը չըպատեց,  
Փակեց խանութը, չունեցաւ վաստակ:

Նա շատ թափառեց, դէս ու դէն ընկաւ,  
Որ կեանքում իրան մի ապրուստ ձարի,  
Բայց իզնւր... ոչ մի բանի պէտք չեկաւ.  
Զուխտ էշին բաժնել չէր կարող գարի...

Վերջը ձարահատ, երբ տեսաւ որ էլ  
Մարդ չե դառնալու, յօյմն էլ է կորել  
Տայոց «այբուբէնն» նա անգիր արաւ  
Եւ ազգի գըլսին քահանայ դառաւ...

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՈՒՂԻ

Մեղքից փրկուելու կայ հեշտ ձանապարհ.  
Շատերն են կանգնած այդ ձանապարհում—  
Աջ ձեռքով նըրանք քանդում են աշխարհ,  
Ձախ ձեռքով ժամում մոմեր են վառում...



## ԱՂՄՈՒԿ

Ուղում ես անուն, որ հասնի երկինք,  
Խօսի՞ր բարձրաձայն, հանի՞ր մեծ աղմուկ.  
Եւ երբ պահանջեն քեզնից գործ, քըրտինք—  
Կոկորդիլոսի՞ր թափիր արտասուք...

Տայ արտում ովլ լուռ քըրտինք է թափում;  
Բախար նըրան է չարաշար խաբում...



## ՄՐՁԻԲՆԵՐ ԵՒ ԽԼՈՒԹԻ


Գալրնան ջերմ օրին մայր-երկրի երես  
Ջերմ գործի ելան արի մըրջիւններ.  
Վաղեցին հա դէս, վաղեցին հա դէս,  
Որպէս ժըրածան, անխոնջ մըշակներ:

Եւ կարծ միջոցում; պարտիզի խորքում  
Կանգնեցին մի տուն — հողաշէն թըմբիկ,  
Եւ ապրում էին ամենքն այդ շէնքում;  
Ասես, մի՛ սիրով կապուած ընտանիք:

Բայց մի օր (աւաղլ երկրի երեսից  
Զարն է անպակաս) խըզճուկ մըրջիւններ  
Յոզնած, ուժասպառ տուն գալով գործից,  
Տեսան տունն իրանց քանդուած ու աւեր...

Ստորերկրեայ ձամբով, թաքուն գողի պէս,  
Սուսիկ փորելով սիրուն շէնքի տակ,  
Լոյս-արևն ատող խըլուրդն էր այդպէս  
Խեղճ մըրջիւնների աւերել վաստակ:


Լոյսի մըշակներ, երբ կեանքի գարնան  
Գործի էք ենում, դուք մի' մնանաք,  
Որ մեղնում նոյնպէս խըլուրդներ շատ կան—  
Թաքուն փոս փորող ամեն գործի տակ...



Կ 0 2 6 6 - 6 7

## ԿԵԱՆՔԻ ԽՆՁՈՅՔՈՒՄ

Թէ կեանքի խընջցք հիւր զընաս ոտով  
Կասեն. «Տեղ չըկայ»—և կանցնես մօտով.  
Իսկ թէ շնորհ տանես սեփական կառքով,  
Ցիմար էլ լինես... կընդունեն փառքով:



## Ի Գ Լ Ա Լ Ի Ս

Երբ ուսանող էր համալսարանում,  
Իդէալ էր փնտրում՝ նա ամեն բանում.  
Նա միշտ ասում էր. «Առանց իդէալի,  
Կեանքն է անապատ, մարդն է խըզձալի»:

Բայց ահա կեանքի նա դըպրոց մըտաւ,  
Եւ, զիտէք, իդէալն ի՞նչ բանում դըտաւ—  
Հարուստ օժիտով մի աղջիկ առաւ  
Եւ կընկայ փողով... յայտնի մարդ գառաւ...




## Ա Շ Խ Ա Բ Հ Ա Ս Յ Ա Ն Ը

(ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ)

Չըմեռուայ յըրտին խեղճ, քաղցած մի շան  
Ես ոսկոր տուի. նա ուրախացաւ,  
Զեռքերս լիզեց և իր շընական  
Ամբողջ չարութիւնն իսկցն մօռացաւ:

Իմ մի բարեկամն ընկել էր նեղ տեղ  
Օգնութեան հասայ, վլրկեցի նըրան.  
Բայց նա մարդկային երախտիքի տեղ  
Թաքուն ամեն ցեխ թափեց իմ վերան...



## ԵՐԿՈՒ ԳԵՏ

Աշաւ երկու գետ։ Մէկն հուժկու ու խոր,  
Հոսում է զօրիել բայց ձայն չի հանում։  
Մէկէլը — ծանծաղ, հոսանքն էլ — անզօր,  
Բայց իր աղմուկով ականջ է տանում։

Խորամիտ մարդն էլ ամեն աղջի մէջ  
Գործում է քաջուժ, բայց լուռ ու անտես.  
Եւ միայն ցանցառ գործիչն է անվերջ  
Բոռում, աղմբկում, ծանծաղ գետի պէս...



## ԿԱՇԱՐՈՒԱՆ ՄԱՄՈՒՆ

Երբ հայոց թերթում  
Ներբող են կարգում  
Տըղուկ աղայի անուան ու փողին,  
Իսկոյն իմ մըտքում  
Մի հարց է ծագում—  
«Թերթը որքան է ստանում տողին...»։



Կ Ա Շ Ա Բ Ք

ԵՐԿՈՒ ԵՐԵՍ

Թոռքը երբէք քեղ չի բերիլ մեծ վընաս,  
Թէ որ կեանքում երկու երես ունենաս.  
Մէկ երեսիդ ի՞նչքան ածեն թոռք ու մուր,  
Միւսը կըմնայ միշտ մաքուր...



Իւղ են քըսում կառքի անւին,  
Որ ընթացքը թիթևանայ.  
Կառքը իւղած անիւներով  
Ծանըր Ճամբան հեշտ կընթանայ:

Կեանքում կաչառքն, ով բարեկամ,  
Շատ նըման է անւի իւղին.  
Կաշառք տալով՝ մենք շատ անզամ  
Հեշտ անցնում ենք զըժուար ուղին...



## ՓԱՄ ՇԻՆՈՂ

Մարդու մէկը մեծ դանձ զիզեց  
Տողին ծախած սատանի.  
Բայց մի օր էլ սիրաը ուղեց  
Դըրախտ զընալ... ի՞նչ անի.—

Նա միտք արաւ մի ժամ շինել  
Խեղձ, յետ ընկած հայ զեղում՝  
Եւ այդ Ճամբով աթոռ զընել  
Արքայութեան մէ ջտեղում:

Գիւղացիք էլ ուրախացած՝  
Տէսց լըսեցին այդ համբաւ,  
Գիւղի բերքից հետերն առած՝  
Եղ ու կարագ, Ճուտ ու հաւ,

Ժամ շինողին բերին ընծայ  
Եւ զօն տուին օրհնանքին.  
«Աղա՛, Աստուած Զերիդ նյժ տայ,  
«Դըրախտ երթայ քո հողին...»:

Բայց մի գիշեր աղէն քընած՝  
Յանկարծ տեսաւ երազում՝  
Ժամը պատրաստ, իսկ ինքն ընկած  
Դըժոնքի սև կարասում<sup>1)</sup>)


Եւ սատանէն զըլլիի վերև  
Քըշիրչում էր ականջին.

1) Հայկական աւանդութիւններում պատճեռում է, որ դժոխքում կայ կպրով լիբը, միշտ եռացող մի մեծ սև կարաս, որի մէջ զցում են ամենաթունդ մնηաւորներին:

«ԱՌ, բարեկամ, գալըդ բարե,  
«Ցանկալի՛ հիւր մեր միջին...»

Եղէն սոսկաց... «Վայ իմ փողեր,  
«Վայ, խաբուեցի...»—նա զոռաց.  
Եւ երբ զարթեց, շատ ուրախ էր,  
Որ գեռ ժամը չէր շինած...

«ՀՐԱՇԱԼԻ՛ ԳԼԽԱԲԻ»



ԱՌԻ, ինչ սիրուն ես... Գլխիդ երեք յարկ,  
Սշտարակի պէս, դրսել ես զրլիսարկ.  
Սառւմ են, մօդան այդ երեք հարկին  
Շուտով կաւելցնի երեք յարկ կըրկին...  
Ափսոս, հայ աղջիկ, ես չեմ աստղագէտ,  
Որ զրլիսիդ կանգնած՝ խօսեմ լուսնի հետ...



## ՀԵՇ ՃԱՄԲԱՅ

Ի՞նչ ճամբով հեշտ է միշտ լրցնել զըսպան—  
Հարուսան այդ ճամբէն լաւ է խմանում.  
Մէկին բաշխում է նա իր հին գուլպան,  
իսկ հարիւր-մէկի շաղիկն է հանում...



## ՉԻ ԵԻ ԿՈՎ

(ԱՌԱԿ ՄԵԽԵՐԻ ՀԱՄԱՐ)

Մի օր գութան լլծուեցին  
Թանգաղ կովն ու արագ ձին  
Եւ միատեղ ըսկան  
Երկիր վարել Զին վազան  
Հայ խըսիսն ջում;  
Վեր-վեր թըռչում;  
Նա ուզում է, որպէս նետ,  
Սուած վաղել,  
Հողն ակօսել  
Իր լլծակից կովի հետ.  
Բայց կովն հանգարտ ու ծանրընթաց,  
Ոտքերն հաղիւ շարժելով  
Լուծն է քաշում; ասես, թըմրած...

Զին զայրացաւ. «Յիմա՞ր կով,  
 Թէ որ այլպէս, այդ խելքով  
 Պէտք է ինձ հետ երկիր վարես,  
 Լաւ է քեզ նոր ընկեր ճարես»:  
 —«Ով իմ առօյդ  
 Ընկեր նըժոյդ,—  
 Պատասխանեց լըծակցին  
 Կովն հեգնանքով. «այն ժիր ձին,  
 Որ ընկեր է ընտրել իրան  
 Դանդաղ կով,  
 Նա էլ կովին շատ է նըման  
 Իր խելքով»...  
 Եւ կովն ու ձին  
 Հսկսեցին  
 Վէճի բըռնուած  
 Երկար - բարակ.  
 Մէկը - կամաց,  
 Մէկէլն - արագ,  
 Անհաւասար, անհամաձայն  
 Գութան քաշել... Եւ վախճանը  
 Սյդպէս գործի եղաւ լոկ այն,  
 Որ փըռեցին համ գութանը,

Համ էլ վընաս տալով հողին՝  
 Խոպան դաշտը անվար թողին...

Իմ մի ծանօթ հայ կըտրուելով ազգից,  
 Ընտրեց իր կեանքին ընկեր - լըծակից  
 Մի օտար աղջիկ - և ամսւսնացաւ.  
 Եւ լուծ քաշելիս՝ նա նոր հասկացաւ  
 Իր սընալ քայլը... բայց ուշ էր արդէն.  
 Մարդ ու կին կըռուով քաշեցին դէս - դէն  
 Հազիւ մի տարի գութանն օչախի.  
 Վերջն էլ այն արին,  
 Որ այդ գութանը  
 Տուին սար - քարին  
 Ու փըռեցին,  
 Ինչպէս կովն ու ձին:




Կեսնկը են անցնում մի յարկի տակ,  
Բայց սըստերով խորթ իրար.  
Տարբե՞ր ձղգտում, տարբե՞ր ճաշակ,  
Կինը—կըռակ, մարդը—քար...

Եւ նայելով ես այդ զցյղին  
Միտք եմ անում—թէ մի օր  
«Ձուխտի» կողքին... «կենաը» բըսնի...  
Ո՞վ է արդեօք մեղաւոր...

«Անիւծը» և «Կենծը»

Մարդը արգեղ, կոշտ ու կոպիտ,  
Հոգին՝ դատարկ, ջերը՝ լե՞ք.  
Կին է առել ծաղկափըթիթ,  
Իրրե ձեռքի խաղալե՞կ...

Արշե՞ն, հաշեւ մարդու զլիսում,  
Ուշ ու միաքը փողե մէջ.  
Սիրոյ ծարաւ կընկայ սըստում,  
Երազներին ըսկայ վերջ...



## ԹՂԹԱԽԱՂ

Թուղթ ու կարիճ, սեղան կանաչ,  
Ծնքուն զիշեր, կռիւ ու վէճ—  
Ծհանոր քայլ գէպի առաջ,  
Նոր դործի սէր աղղի մէջ...

Թուղթ են խաղում հարուստ, անփող,  
Տէրտէր, ուսեալ և անուս,  
Նցն իսկ հայ կին, հայ ուսանող...  
Ցընծա, հայ աղդ, աչքըդ լուս...



## Ի Գ Լ Ա Լ

«Իդէալ իդէալ» ենք դոչում ամեն օր,  
Բայց ոչ ամեն օր ապրում իդէալով.  
Որպէս պըճնամոլ կընկայ սիրած շոր,  
Իդէալն հագնում ենք՝ տեղին նայելով...



## ԳԱՅԼ-ԲԱՐԵՊԱՇՏ

Անթիւ են մեր մէջ դայլ-բարեպաշտներ.  
(Մէկն, մանաւանդ, լմւ եմ Ճանաչում...)  
Մութով նա պաշտում սատանի պատիեր,  
Լուսով անդադար Ս.ստուած է կանչում...

Արտասուք խըմել կամ արիւն ծըծել  
Պատրաստ է նա միշտ—ամեն թրշուառից.  
Բայց փորձի՞ր մի ճանճ ոռքի տակ գրցել,  
Նա ահով զողով կանցնի վերայից...

Նա ժամ կըմտնի, Ս.ստծու գառան պէս,  
Երեսին անվերջ, անվերջ խաչ կ'անի,  
Բայց թէ կեանքի մէջ նըրա Ճանկն ընկնես,  
Մըսագործի պէս, կաշե՞դ կըհանի...



Պ Ա Տ Ի Ւ

Ասում են, մարդը պէտք է իր անձից  
Միշտ բարձը դասի պատիւն անարատ,  
Եւ ով զըրկուած է այդ անգին գանձից,  
Նա է կեանքի մէջ ամենից աղքատ...

Բայց թէ որ հարցնէք գուք հայ կրեսոսին,  
Կասէ. «Պատիւն է՝ արծաթ-աբասին  
«Եւ կեանքում անփող, դատարկ զըրպանը—  
«Դա է ամենից անպատիւ բանը...»:



Զ Ա Կ Բ Պ Ա Շ

Ո՞վ հայ աղջեկ, անզուր դէմքով,  
Դարդ մի' արա ու մի' լոր.  
Մեծ օժիասով, փոքըթ խելքով  
Երեէք տանը չես մընար:

Սերունդ ունենք ուսման տռած,  
Կանցնի չորս կամ հինգ տարի,  
Եւ կըտեսնես շուրջըդ խըմբուած՝  
Դիպլօմաւոր մուշտարի...



ԳԻԳԻ ՄԱՄՈՆԱՆ


Մի օր հարց տուի ես Մամոնային.  
«Ասա, ի՞նչ անեմ, որ քո սեղանին  
ես էլ հիւր լինեմ—և հիւր ցանկալի».  
Ի՞նչ ձանապարհ ես դու ինձ ցոյց տալի»:

—Իմ ծոցըս գալու կան շատ ուղիներ,  
Ասայ Մամոնան,—ծուռ, ձախ, վար ու վեր...  
Եւ որն էլ ընարես, իմ սիրած հիւրն ես,  
Լոկ շիտակ ուղուց դու դարձրու երիս...



## ԽԵՂՈՔ ԽՈՍՔ

Երբ խելազուրկը խելք է քարոզում,  
Կալեկն ուղում է ծաղրել հռետորին,  
Բըլբուկի մասին ազռաւն է խօսում,  
Սոխն էլ «Հոտած է կոչում սըխտորին,  
Երբ քոռը լցյսի դասեր է տալիս,  
Էշն էլ ուղտին է զըցում մասխարա,—  
Եյս խելօք խօսքն է միշտ միտըս դալիս.  
«Քաշալ, դեղ ունես, քո գըլլիսին արտ»...



## ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ

Եւրոպայում լցյս են սիրում,  
Այնտեղ վառ է լցյսի ձըրագ,  
Ամեն մութ խորշ լցյս են փըռում:  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Այնտեղ — ուսման, զըռքի սէրը  
Զարգանում է արագ - արագ.  
Ցեցի՛ համար չեն զըռքերը.  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Եւրոպայում — զըռչի մարդը  
Չոփի չի կըարում՝ չոր ու բարակ.

Նրան չի մաշում հայի դարդը.  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Եւրոպայում — աղջի գողին  
Խաղկ են անում ու խայտառակ.  
Ուշք չեն դարձնում զիրքին, փողին.  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Ջնտեղ — կինը մարդ է անկախ,  
Կեանք է մըտնում նա համարձակ,  
Սիրում աղատ, ատում անվախ.  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Եւրոպայում — չի ընդունուած  
Ամենայն օր ժամ՝ պատարագ,  
Բայց կայ այնտեղ խիզ ու Աստուած.  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Եւրոպայում — դործը բարի  
Դուրս չի պրծնում հըրապարակ,  
Զուռնա փրչում. «Ես այս արի...»  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Եյնտեղ — մանուկ դառան գըլիսին  
Արջ չեն կարգում դաստիարակ.  
Կըրթութիւնն է բնւն աղպային.  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Եւրոպայում — հայն օտարի  
(Թէկուղ վըրէն իւղ ու կարագ)  
Կըր ուառողներ շատ չէք ձարի.  
Իսկ մեղանում — ընդհակառակ...

Եւրոպայում — լուրջ կրիտիկան  
Նիւթն է քըննում ծանր ու բարակ,  
Հապա տալիս վըկայական.  
Իսկ մեղանում — ընդհակառակ...



## ԺԱՄԱՆԱԿԻՑ ՀԱՅ ԱՊԶԿԱՅ ԱՐԹՈՒՐ

Պօէտն հաւանեց մի քընքոյշ էակ,  
Նըրան անուանեց երկնային հրեշտակ.  
Եւ մի օր ասաց հաւանած աղջըկան.  
«Ի՞նչ զրեմ ալեօմումդ—վառ սիրոյս նըշան»:

— «Գլուխի՛ր,—կոյսն ասաց,—միամի՛տ պօէտ,  
Որ քո հրեշտակը կըկապուի քո հետ,  
Թէ որ թողնելով դու Մուսա, Պառնաս,  
Բօրսայում ոսկու մեծ երգիչ դառնաս...»



## ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐՏԻԿԱ

«Գիրքն ստացանք... էջ ըսրս հարիւր,  
«Գինն է աժան, տիպն է մաքուր,  
«Փլանի գրուծ, փստանի տըպած,  
«Փլան քաղաքումն է լցու տեսած.  
«Խոստանում ենք այլ ժամանակ  
«Խօսել երկար և լնդարձակ...»:

\*

Եւ անյնում են շաբաթ, ամիս,  
Տարիք զընում, տարիք գալիս.  
Իսկ կրիտիկան՝ տէ՛ր իր խօսքին՝  
Գիրքն է քըննում... էշե՛ զատկին..».



ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԻ ԱԳՈԹՔԸ

ՕՐԻՈՒԹԻ Խ-ԻՆ

(ՈՐ ԽՆԴՐԵԼ էՐ ԼՈՒՍԱՆԿԱՐ ՊԱՏԿԵՐԸ ՄԱԿԱԳՐՈՒԱՆ ՈՐ ԵՒ Է  
“ԳՐՁԻ ՔԱՆԱՔՈՎ”)

Ուղարկում եմ քեզ իւր պատկերն,  
Վերան զըրած երկու տող.  
«Խճճթ հարուստին ծախի՛ր քո սէրն,  
Խելքը զբօշ է, առանց փող...»:



Աստուած, չեմ խնդրում Քեզնից գավինիներ,  
Ճառեր, յօրելեան, ուղերձ, հեռազիր,  
Փառաւոր թաղում, մահից յետոյ սէր—  
Այդ ողջն ինձ կըտայ հայրենի երկիր...

Մի բան է խնդիրքս, ով Տէր երկնաւոր,  
(Այդ բանն ինձ ազգըս երբէք չի տալու.)  
Տուր ինձ կըտոր հաց, կամ այնպէս շընորհ,  
Որ կարողանամ օդով ապրելու...



Ժ Ա Ղ Ա Վ

Հաւաքուել էինք բաղմաթիւ հայեր  
Մի շատ կարեռը մեծ գործի համար.  
Ժողովում Կիլքը — մեղ նախագահ էր,  
Ուշուցը — հռետոր, Ուր — քարտուղար...

Եւ ակնթարթում մենք իրար անցանք,  
Տեղ տուինք նոյն խակ տուր ու դրմիոյին.  
Վերջն էլ ժողովը թողինք հեռացանք,  
Մազի չափ մի շահ չըբերած գործին...

Միայն դուրս գալիս՝ զըռան մօտ անձայն  
Տեսանք մի էակ՝ վիզը ծուռ կանգնած —  
Արդարութիւնն էր այդ հալածական,  
Որին նախագահն ժողով չէր թողած...



ՀԱՅ - ԵՒՐՈՊԱՅԻ

(ՄԵՐ ԱԴԱՅԱԿԱՆ ՏԻՊԵՐԻՑ)

Էշն էն էշն է — փալանն է փոխել:  
Ժողովը. Խօսք:

Երէկ հաղին հին արխալուղ,  
Ոտքին — ջորաբ, արեխ ու քօշ,  
Մականունն էր «եղան զըլուխ»,  
Կերած ձաշը — սոխ ու լօշ:

Տունը — տուն չէր, այլ հակի բուն,  
Քընում աղտոտ պուճախում:  
Արհեստ չունէր — նաև օրն ի բուն  
Չու էր առնում, ձու ծախում:

Այսօր... տեսէք, նա մեծ մարդ է  
Համը ապրուստով, համ շորով.  
Ում տուն մըտնի—նա տան զարդ է  
Իր լի ջէբով, լի փորով:

Ասիական կեանքն է ատում,  
Եւրոպայով շըլացած,  
Առանց լաւեց հայ չի ուտում,  
Սոխն ու լոշը մոռացած:

Սէյր անելիս փողոցներում  
Քիթն է յըցում միշտ վերև.  
Ինքն առաջին չի բարեռում,  
Բարեներն են բազմաձև...

Պինդ հազում է, բարձրը խօսում,  
Հաշուով շարժում ձեռ ու ոտ.  
Ուրիշին է խելք քարոզում,  
Խելք խելքի միշտ կարօտ:

«Երկրի աղն» է իրան կարծում  
Յարգանք, պատիւ սպասում:

Ազգի կեանքում, ամեն գործում  
Դիր խաղալ է միշտ ուղում:

Հողին կըտայ, որ քիթ խոթի  
Հասարակոց դործի մէջ.  
Հէնց որ խոթեց, Տէրն աղատի,  
Անսանձ «ես»-ին չըկայ վերջ...

Բայց ի՞նչի հայ - եւրոպացին  
Խօսքի, վէճի բըոնուելիս,  
Ե՞նքան սիրում էշի քացին  
Եւ քացի է միշտ տալիս...

Ի՞նչի... Թէ որ լաւ միաք անէք,  
Հէ չըպէտք է զարմանալ—  
Փալան փոխած էշը երբէք  
Ազնիւ նըմոյդ չի դառնալ...



Զըգիտեմ, ի՞նչի, ձեզ մըտիկ տալիս՝  
Այն բընագէտն է իմ միտք գալիս,  
Որ հաստատում է, թէ թըռչուններից  
Նա է անտաղանդն, անխելքն ամենից,  
Որն աւելի՛ է փետրով զարդարուն.  
Եւ բընագէտը (չեմ յիշում անուն)  
Իր ասածներին իբրև օրինակ,  
Բերում է նախշուն Սորսմարդ, ԹՌԻԹԱԿ...

### ՆԱԽՇՈՒՆ ԹՌԻԹԱԿՆԵՐ

Պըճնասէ՛ր կանայք, որ զիշեր ցերեկ  
Քուններդ կըարած, ուրիշ հոգս չունէք,  
Բացի հաղնուելուց, Ճոխ զարդարանքից,  
Լոկ Ճոխ լաթեր էք դուք խընդրում կեանքից,  
Որ լաթի սիրոյն հոգի էք տալիս,  
Երբ կայ—ծիծաղում, երբ չըկայ—լալիս,  
Եւ յաճախ լաթի համար զարդարուն  
Զեր սէրն էք ծախում չըսիրած մարդուն,—



## ՅԱԽԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1

Կուզէի լինել հայ աստուածաբան,  
Նոր վերադարձած արտասահմանից.  
Ցոյց տալ խեղճ աղքիս դըրախտի ձամբան,  
Աղատել նըրան «բազում մեղքերից»...  
Շատերի նըման, և ինձ Մայր Աթոռ  
Կըտար, անկասկած, պաշտօն փառաւոր...

2

Կուզէի լինել ևս հայ խըմբագիր,  
Հայոց «այրուբէնն» ակնոցով ջոկող.

54

Ֆանգ ու բեկլամով տըպել լըրագիր,  
Կեանքում չըգըրած բընաւ ոչ մի տող...  
Համբերող հայ աղքն իմ պէսին, անշուշտ,  
Կըտար համ անուն, կըպահէր համ կուշտ...

3

Կուզէի լինել հայոց վանքերից  
Մէկի վանահայր — հիուու անկիւնում,  
Որ մարդ չըտեսնէր — եկամուտներից  
Ուրբան է ծածուկ իմ ջէրը գընում...  
Եւ, հարկաւ, իմ Պետն ինձնից գոհունակ՝  
«Պի՛նդ տեղդ նըստիր»—կըտար ինձ կոնդակ...

4

Կուզէի լինել հայ երեցփոխան,  
Հաշիւ չըտուող տաճնեակ տարիներ.  
Հէնց ժամի կողքին ես էլ սեփական  
Շէնք կըշինէի, դառած տընի տէր...  
Եւ թէ մի հայ թերթ անուանէր ինձ գող.  
Մի ուրիշ հայ թերթ կըկարդար ներբող...

55

Խ Ս Ա Ֆ Ե Բ . . .

«Ա Ս Տ ՈՒ Ա Ծ »

Չախորդ օրերին, երբ նեղն ենք ընկած,  
Ամեն մի րոպէ «Աստուած» ենք կանչում.  
Բայց հէնց գործներըս աջողակ գընաց,  
Իսկոյն սատանի երեսն ենք պաշում. . .



Ո՞ւ հաւատացէ՞ք, անծայր երկնքում  
Չեն փայլում այնքան բազմաթիւ աստղեր,  
Որքան լըսում եմ ես հայի կեանքում  
Խօսքե՞ր և խօսքե՞ր. . .

Ահա ժողով է: Տայերն հաւաքուել  
Ազգային մի մեծ աղէտի համար,  
Խորհուրդ են անում, թէ ի՞նչպէս փըրկել  
Հայ սովեալներին անտերունչ թըշուառ.  
Եւ սկսվում է աղէտի առթիւ  
Ճառե՞ր, կարեկցանք, խօսում են, խօսում.  
Խօսքերն են սիրուն, խօսքերն են անթիւ...  
Իսկ խեղճ սովեալներն հաց են աղերսում...


Գործիչ ենք թաղումն Դամբանի առաջ  
 Խռնուած է երկսեռ բազմաթիւ ամբոխ.  
 Լըսում ես չորս կողմուն կարեկցանք, հառաջ  
 «Ահ, ի՞նչ վաղ մեռաւ, ափսոս, հայ դործող»...  
 Եւ սկսվում են հայ դործչի մասին  
 Դամբանականներ, թէ ի՞նչ է արել.  
 Բայց նայէք խեղջի մաշուած երեսին,  
 Այնտեղ կըկարդաք. «Քաղցից եմ մեռել...»

Շըքեղ խնջոյք է: Շամպայնն ու գինին  
 Թափվում է առատ, հեղեղի նըման.  
 Սեղանաւորներ լի թասեր ձեռին  
 Գոռում են. «Կեցցէ հայն ու հայաստան».  
 Ճառեր են ասում՝ կատարը տաք-տաք,  
 Էն էլ ի՞նչ ճառեր, ի՞նչ ուխտ ու խոստում  
 Աղջին օդնելու... Բայց մի՛ հաւատաք—  
 Վաղն այդ բոլորը կըցնի օգում...

Մի այլ աեսարան: Մայրաքաղաքում  
 Հաւաքուած մի խումբ հայ ուսանողներ  
 Ճառում են՝ ծըխով լըցուած սենեակում,  
 Քարոզում իդէալ վեհ սկզբունքներ...

Անցնում են տարիք... Պատկերը նախկին  
 Տեսնում ես փոխուեց... Կեանքի բազարում  
 Նոյն ուսանողներն այլ շապիկ հագին,  
 Սուրբ իդէալներն են փողով վաճառում...

Օ՛, հաւատացէք, անծայր երկնքում  
 Չեն փայլում այնքան բազմաթիւ աստղեր,  
 Որքան լըսում եմ ես հայի կեանքում  
 Խօսքեր հաւատացէր...



## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒԹԻՒ

### ԱՆՀՈԳ ԿԵԱՆՔ

Անգործ ու փափռեկ ապրելու համար,  
(իմ այս խըրատը լաւ միտըդ պահեր.)  
Հազի՞ր փարաջա, զըլիսիդ դի՞ր վեղար  
եւ չայոց թեմի առաջնորդ եղեր...



—Մի՞աք, իմաստ չըկայ ձեր գըրուածներում...  
«Բայց դուք, ով պարոն, փաստե՞ր չէք բերում».  
—Փաստե՞ր էք ուզում: Համեցէք, իսկցն,—  
Ձեր քիթը մեծ է, ձեր դէմքը—զըժգոյն,  
Սչքերնիդ՝ ակնոց, միրուքնիդ՝ երկար...  
Բստ լօգիկայի՝ դուք շատ էք արխմար...  
«Բայց դո՞ւք... ով պարոն, միթէ կարող էք  
Ողջամիտ դատել, երբ գիշեր ցերեկ  
Թութուն էք քաշում—ձեր փոքրիկ քըթից  
Ծուխն է անպակաս, զուրկ էք և միրքից...  
Դո՞ւք էք արխմար՝ ըստ լօգիկայի,  
Եւ ընթերցողն էլ այդ կըվեկայի»...



## ՊՐԻՆՑԻՊ

ՆՈՒՅՐ ԻՄ ԲԱՐԵԿԱՄ ՄԻՆԱՄ ՀԱԶԱՐԵԱՆՑԻՆ

Առւտ է, եղբայր, որ հայը դեռ  
Ցետ է մնացած և անուսում:  
Ամեն գործում եւրոպասէր—  
Պրինցիպից է նա միշտ խօսում:

Առ, ում կուզես—վաճառական,  
Գիտուն, տըգէտ, ժամկոչ տէրտէր—  
Ի՞նչի համար զիմես իրան,  
Մէջ կըքերի նա պրինցիպներ:

Խեղձի օգտին փող ես խընդրում,  
Թէրթ ես տալիս ստորագրութեան.  
Բայց պրինցիպով նա չի օգնում,  
Նա ընդգէմ է ողորմութեան:

«Գէթ որբերին եղէք օգնող»,  
Աղերսում ես հայ մեծատան.  
— «Ո՛չ, պրինցիպով ես չեմ կարող,  
Ես դէմ էի ազգի շարժման»:

«Դէ, հայ թերթին գոնէ զըռուէք  
Դուք բաժանորդ»: — «Ո՛չ այդ կերպով  
Թէրթին ցժ տալ—օ, ինձ ներէք—  
Հակառակ եմ ես պրինցիպով»:

Նախատում ես—ի՞նչու որդիկ  
Հայոց լեզուն չի ուսանում.  
Եւ հայն իսկոյն կոսմօպօլիս՝  
Պրինցիպներ է մէջ տեղ հանում:  
Հայ կայ հեւանդ, աղքատ, անտէր,  
Հայ բըժիշկ ես դու ձայն տալիս.

Դարձեալ պրինցիպ... Դօքտօրը մեր  
Աղքատ տըներ չե՞ ման գալիս...

Հայ է մեռնում անօդնական,  
Հայ տէրտէր ես իսկոյն կանչում:  
Ելե՞ պրինցիպ... Հայ տէր-բարան  
Աղքատ մեռել չե՞ ձանաշում...

Մուտ է, եղբայր, որ հայը դեռ,  
Անուսում է և յետ մնացած.  
Հայի նըման պրինցիպտուէր,  
Կոկ հային է ստեղծել Աստուած...

Ա Ռ Ա Կ Ն Ե Ր



# ՓԼՈՐԻԱՆ

1.

ՀԱՅԻ ԵՒ ՈՐԴԻ

— «Ասա՞ ինձ, հայրիկ, ի՞նչ ճանապարհով  
կարող եմ հասնել բախտաւորութեան», —  
Թարձաւ իր հօրը՝ որդին հարց տալով,  
եւ հօրիցն առաւ այսպէս պատասխան.  
«Սշիստել ձեռքով,  
Սշիստել խելքով,  
Մառայել ազգին ու հայրենիքին,  
Միշտ գիրք ու զրոիչ ունենալ ձեռքին,  
եւ ընդհանրութեան լինել օգտակար—  
Ոհա՞քեղ բախտի սիրուն ճանապարհ»:

— « ԹՇ, այդ ծանր է շատ: Արդեօք չըդիտե՞ս,  
     Տայրի՛կ, այլ ուղե՞»:  
 «Գիտե՞մ, ի՞նչպէս չէ—պէտք է օձի պէս  
     Եւ գաղտագողի  
 Վեր սողալ, մըտնել «բարձր» ծակուծուկ,  
 Բանեցնել շընորհ՝ աղուէսին յատուկ...»:  
 — «Ոչ այդ ստոր գործ է, կեղտու ճանապարհ»:  
 «ԷՇ, եղեր ուրեմն... ուղղակի յիմար.  
 Այդպէս էլ շատերն հասնում են, որդի՛,  
     Փառքի ու բախտի...»:

2.

ԺԱՂԱՏՆԵՐԻ ԿՈՒԻԽԸ



Երկու ճաղատ բարեկամ  
 Սէյրի ելած մի անգամ,  
 Տեսան յանկարծ — քիչ հեռուն  
 Մի ինչոր բան պըսպըղուն  
 Խոտերի մէջ կըփայլէր:  
 Ուրախացան երկուսն էլ.  
 — «Գիւտը ի՞մն է» — մէկն ասաց.  
 «Դարդակ, դարդակ դուրս մի՛ տա»,  
 Միւտը գոչեց տաքացած.  
 «Է՞նք առաջին ես գըտայ. . . »:

Եւ սկսուից նըրանց մէջ  
 Մի չըեսնուած կոիւ ու վէճ։  
 Էլ մէջք, էլ կողք չեն հարցնում;  
 Հասած տեղին հայ կըպցնում,  
 Պոկ չեն գալիս մէկմէկից.  
 Եւ իրարու մերկ զըլիսից  
 Երկու Ճաղատ բարեկամ;  
 Աւաղ վերջին մազն անգամ  
 Առան, անխնայ փետեցին,  
 Եւ, վերջապէս, դազրեցին,  
 Որովհետեւ զիւտը նրանց—  
 Կոտրած սանդր էր՝ դէն զըցած...



3.

### ԲԱԶԻ ԵՒ ԱՂԱԽՆԻ

Գիշատիչ թաղէն  
 Փետրում էր անգէն,  
 Անպարտ Աղաւնուն իր սուր Ճանկելում:  
 «Ճանկը ես ընկել զուր ես աշխատում  
 Պըծնել իմ ձեռից... Ախ, դուք նենդաւոր,  
 Չարութեան սովոր,  
 Խորամանկ օձեր.  
 Օ, լիրբ ցեղը ձեր  
 Լաւ ենք Ճանաչում և, զիտենք ինչպէս,  
 Ատում էք դուք մեղ.  
 Թայց կան աստուածներ վըրէժխնդրութեան,  
 Նըրանք ամենքին կանեն դատաստան»:

— «Ո՞ւր է, երանի,  
թէ այդպէս լինի,

Զայնըդ լըսէին արդար աստուածներ», —  
Խըղճուկ Աղաւնին աղնքաց կիսամեռ:  
«Ի՞նչ ի՞նչ ուրացող, այդ ի՞նչ ասացիր,  
Մի մէկ էլ կըրինիր.

Դու չես հաւատում հա աստուածներին,  
Նախախնամութեան կարող ցիժերին.  
Է՛շ, ուզում էի աղատել ես քեզ,  
Բայց չէ, տեսնում եմ, որ արժանի չես.  
Մեռիր ուրեմբն, չիք քեզ փրկութիւն,  
Անաստուածներին չըկայ թողութիւն»:



## ԼԱՇԱՄԲՈՂԻ

1.

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՐ

Կար-չոկար մի մարդ՝ անչափ բարեսէր.  
Եւ ահա մի օր նա ականջ գըրած  
Իր սրբոի ձայնին, աղատել կուղէր  
Ճընշող փալանից իր էշն սիրած.  
Եւ ի՞նչ էք կարծում... (Ես չեմ հաւատում),  
Բայց աւանդութիւնն այսպէս է պատմում,  
Որ այդ բանն հէնց որ էշն է իմանում,  
Միրաը կոտրվում է, սաստիկ նեղանում,

Եւ սկսում է բարձրածայն զըռալ —  
 եղ ՞ր օրուանից, կուզեմ իմանալ  
 Եւ ՞ր խելօքն է կարգ - կանոն զըռել  
 Որ մեծ ամօթ է՝ մեղ փալան կըռել  
 Էն օրից, հինգ որ ևս աչք եմ բացած,  
 Սիրով եմ մշջքիս միշտ փալան կըռած.  
 Իր փալանովն է հայրըս պարձեցել  
 Փալանի տակն է պապըս մեծացել  
 Ես էլ ողջ կեանքըս նըռանց հետեած՝  
 Երբէք փալանըս չեմ զընի ևս ցած...

2.

ԵՐԵԽԱՅ ԵՒ ՃՐԱԳ

Մի օր երեխան մայիլ աչերով  
 Ճրտդին նայելով  
 Սկսեց լոյսին պատմել մի առ մի  
 Փափազը սըռտի —  
 Կուզէի ևս էլ այ Ճրագ լուսատու,  
 Քո փայլն ունենալ քեզ նըման լինել  
 Օդուտ տալ մարդկանց և, ինչպէս որ դու,  
 Ամեն մռւթ տեղեր շող ու լոյս փըռել:  
 « Եյդ լաւ փափագ է » — յանկարծ երեխան  
 Առաւ պատասխան —

«Կեանքում ապրելով՝ խաւարն հալածել  
 Ու լոյս տարածել  
 Բայց աջողվում է դա շատ քըչերին.  
 Այդպիսի քաջ գործ անձնուրացութեան  
 Նաև պինդ է պառկում մարդու ուսերին.  
 Եւ ով ուզում է հասարակութեան  
 Պայծառ ծառայի,  
 Նա պէտք է վերջը, ճըռագի նըման,  
 Եւ ինքը այրուի»:

3

ՎՏԱԱ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐ



Եռներից վազող վըտակն յորդացած,  
 Աղմուկով նետուեց գիւղական փողոց,  
 Ուր հէնց այդ ժամին խաղովն էր ընկած  
 Ահազին մի խումբ գիւղական տըղոց.  
 Տըղերքն ապշեցան  
 Ու իրամ անցան,  
 Բարձրացրին իսկոյն աղմուկ, աղաղակ.  
 «Տեսէք, ա տըղերք, ի՞նչպէս է արագ,

Ի՞նչպէս է զըմուած նա վաղում անկանդ,  
Եւ ջըրեր լէն-լէն  
Փըսում դէս ու դէն,  
Ամբողջ զիւղին է նա սպառնում վըտանդ.  
Բայց բախտը բերեց, որ այս չար ժամին  
Այստեղ զըտնուցանք այսպէս խըմբովին.

Դէհ, գործ անդադար,  
Աշխատենք անվախ,  
Կըրենք փայտ ու քար,  
Յարդ, աւաղ ու ցախ»:  
Եւ ահա խսկոյն խօսքը մէկ արտծ,  
Եռանդով լըցուած,  
Քաջ երեխաներն գործ են սկսում,  
Գործն է թունդ եռում;  
Քափ-քըսարինք մըտած՝ դէս ու դէն վաղում,  
Քարեր են բերում,  
Որ դադարեցնեն վըտակի հոսանք...  
Բայց ղուր աշխատանք...  
Վըտակն անզուսպ է և անյաղթելի,  
Նա հէնց առաջ է, առաջ սըլանում  
Եւ խեղճ զիւղական երեխաների  
Կանդնած պտտերն է քանդում ու տանում...

Յոզնեցան տրդերքն. Եռանդն էլ սառաւ,  
Աշխատանքն աշխատանքն անօդուտ դառաւ...  
Եւ յորդ վըտակը նըրանց էլ կառնէր,  
Իր հետ կըտանէր  
Բայց մեր քաջերը շուտ զըլլի ընկան,  
Թողեն, պուկ եկան...

Այգպէս վըտակ է — առաջդիմութիւնն.  
Եւ թըմիած կեանքի արի պաշտապաններ  
Որքան էլ ջանան կանգնել ամրութիւն,  
Պատանէշով նըրա հոսանքը փակիլ  
Զուր է... Ժամանակն նըրանց գործերի  
Հետքն անդամ ջընջած՝ կըտանի իր հետ,  
Ինչպէս զիւղական կարճ-խելք տղաների  
Կըլած ցախ ու փետ:



# ԳԵԼԼԵՐԻ

Ա Ա Ա Ա

---

«Քաղաքիցը նոր ես չըուել բարեկամ;  
Ոսա, ի՞նչ են այնտեղ խօսում մեր մասին,  
(Կըկուն հարցրեց Կաջաղակին մի անգամ).  
Օրինակ՝ հենց առնենք փոքրիկ սոխակին,  
Շատ կուղէի իմանալ թէ քաղաքում  
Ով ի՞նչպէս է նըրա երդը հաւանում»:  
— Օ՛, սոխակը տաղ ասելիս այդու մէջ,  
Ողջ քաղաքի հիացմունքին չըկայ վերջ»:  
«Իսկ արտօնւալ».

Սըտուան էլ է երդելիս,  
Եր երդերով շատ շատերին զուր գալիս:

«ԱՇ զարմանք բան: Իսկ սարեկին լըսելով՝  
ի՞նչ են ասում քաղաքացիք».

— Շատ սիրով

Նըրան էլ են գովում:

«Մի՞թէ... բայց էլի  
Քեզ բարեկամ, մի բան հարցնել կուղէի.  
Արգեօք երբէք քաղաքում զու չէ՞ս լըսած  
իմ մասին էլ մի քանի խօսք»:

— Ճիշտն ասած,

Այնտեղ քցրի՛կ, անունդ անգամ, որ ասես,  
Ո՞չ տալիս են, ո՞չ էլ երբէք յիշում քեզ:  
«ԱՇ, — պինդ Ճղաւեց կըկուն սաստիկ զայրացած,  
Որ այդպէս է, ես ցցյ կըտամ այդ մարդկանց,  
Մինչև մահըս, ի՞նչքան մէջըս ոյժ ունեմ,  
Ես ի՞նքս ինձ կըգովեմ»:



# ՌԱՏԻՄԲՈՆՆ

## ՄԱՔՈՒԹ ՃԱՆԱՊԱՐՀ

—Պատուելի՛ ջորի, ես չեմ հասկանում  
ի՞նչի ես գու հէնց քայլերդ ծըռում  
Դէպի անդունզը: Ախար, չէ այնտեղ  
Համ աշալի է, Համ ճամբէն է նեղ:  
Ասա ինձ, ի՞նչ է արդեօք պատճառը,  
Ի՞նչն է քեզ մըլում դէպի վըտանզը,  
Ուղում ես կարծել ձիգ ճանապարհը,  
Գին չունի արդեօք քո աչքում կեանքը,

Թէ հէնց ուղղակի  
Ընկել ես կողքի,  
Որ ցոյց տաս, թէ միշտ քո երակներում  
Իշական յամառ արիւնն է եռում  
Գիտցի՛ր, պատուելի՛ս, որ ես իմ զըլիսից  
Ոչ ձեռք եմ քաշել ոչ զըզուել կեանքից,  
Եւ խոնարհաբար կըլսնզրէի քեզ  
Էլի առաջուայ մեծ ճամբան բրոնես:  
«Տէ՛ր իմ, ես երբէք յամառ չեմ եղած,—  
Զորին զըլիսակոր տուաւ պատասխան:—  
Ոչ էլ կեանքն է ինձ ատելի դարձած.  
Բայց որ թողնելով մեծ ու լայն ճամբան,  
Եյս նեղ շաւզովն եմ առաջ ընթանում,  
Եւ վըտանզն անդամ ինձ չի վըրդովում;  
Պատճառն այն է, աէ՛ր—մեծ ճամբի մէջ առել  
Տեսնում եմ շատ ցեխ.

Թող այս նեղ ուղիս լինի տատասկոս,  
Ուղերը ծակն փըշերը սուր - սուր.  
Գոնէ չեմ լինի ես երբէք ցեխոտ,  
Կըմընամ մաքուր»:

Եյղպէս, սիրելեք, և պատուի ճամբան,  
Մարդկային կեանքում  
Փըշտ է լինում,  
Եւ նա է փառքի, գովեստի արժան,  
Ով այս աշխարհում ուղին փրշալեց  
Գերազասում է հարթ ճանապարհից:

## ՊՈՒԽԾԿԻՆ


### ՆԱՐԻՉ ԵԻ ԿՕՇԿԱՎՐ



Մի օր կօշկակարն պատկեր զըննելով,  
կօշեկների մէջ սըխալ նըկատեց.  
Նըկարիչն իսկոյն վըրձինն առնելով՝  
Սըխալը ըստկեց:  
Սակայն կօշկակարն էլ շատ սիրտ առաւ  
Եւ ուռած-փրքուած՝ խօսքն առաջ տարաւ.  
«Երեսն էլ է ինձ, պարոն նըկարիչ  
Ծուռ թըւում մի քիչ  
Եւ, իրաւն ասած, կուրծքն էլ չափազանց  
Մերկ է նըկարած»...

Նըկարիչն խսկոյն խօսքը կըտրելով,  
Գոշեց անհամբեր.  
— «Դատի՛ր, բարեկամ, միայն զատելով,  
Դու մի՛ բարձրանար կօշիկներից վեր»:

Բարեկամ ունեմ ես աչքի առաջ.  
Զըգիտեմ ի'սկը — ի՞նչով է նա քաջ,  
Ի՞նչ բանում զիտուն: Բայց լեզուին նայես,  
Լեզուով նա խիստ է: Մէկն ասի՝ ի՞նչ ես  
Դու աշխարհ զատում:  
Երբ խելքըդ հաղեւ կօշկին է պատում:



## ԽԵՄՆԻՑԵՐ

ՍԱՐԻ Ի ԵՒ ՃԱՆՇԵՐ

«Ա՛, զիտեմ Հիմայ», — բարձրաձայն գոչեց  
Սարգն ուրախացած.

«Պատճառը զըտայ — ի՞նչու ոչ մի մեծ  
Դեռ ձանձ չեմ բըռնած,  
Իսկ մանըր - մըժուր, որքան կամենաք.  
Արի, ոստայնըս փըռեմ լայնարձակ,  
Ով զիտէ, զուցէ, ձանկ զըցեմ սյդպէս  
Մէծերին նոյնպէս»:  
Եւ ոստայն փըռած՝ սպասում է զուր.  
Ընկածներն էլի մանըր են ու մըժուր.

Իսկ թէ մեծ ձանձ է վրայ թռչում յանկարծ,  
Զի՞ մնում ոստայնում;  
Ոստայնը պատռած՝  
Իր հետն է տանում:

Նոյնն է պատահում  
Եւ մեղ հետ կեանքում.

Փոքրո մարդ եղար, որ կողմն էլ շուռ դաս,  
Փորձանիքն է իսկցին զրլիիցդ անպակաս.  
Բայց առ, օրինակ,  
Դատաստանի տակ

Ընկած մի մեծ մարդ՝ գողութեան համար.  
(Ով ինչ ուղում է, թող ասի, զըրի)  
Նա դատաստանից գուրս կըգայ աբդար,  
Իսկ փոքրիկ գողը պատիժ կըկըրի:

Ց Ա Ն Կ



## ՑԱՆԿ

	էջ.
Գլուխ, իմ գրքովկ . . . . .	5
Հայ բարեգործներ . . . . .	7
Փոռքը . . . . .	8
Մեծ վիշտ . . . . .	9
Մեծութեան աթոռ . . . . .	11
Հայ քահանայ . . . . .	12
Փրկութեան ուղի . . . . .	13
Աղմուկ . . . . .	14
Մրջիւններ և խլուրդ . . . . .	15
Կեանքի խնջոյքում . . . . .	17
Իգեալիստ . . . . .	18
Աշխարհիս բանը . . . . .	19
Երկու գետ . . . . .	20

	էջ.
Կաշառուած մամուլ . . . . .	21
Երկու երես . . . . .	22
Կաշառք . . . . .	23
Ժամ շինող . . . . .	24
«Հրաշալի՛ գլխարկ» . . . . .	27
Հեշտ ձամբայ . . . . .	28
Զի և կով (առակ մեծերի համար) . . . . .	29
«Ջուխտը» և «Կենտը» . . . . .	32
Թղթախաղ . . . . .	34
Իդէալ . . . . .	35
Գայլ-բարեպաշտ . . . . .	36
Պատիւ . . . . .	37
Զուր վիշտ . . . . .	38
Դէպի Մամնան	39
Խելօք խօսք . . . . .	40
Նմանողութիւն . . . . .	41
Ժամանակակից հայ աղջկայ ալբոմը . . . . .	44
Հայկական կրիտիկա . . . . .	45
Օրիորդ Խ-ին . . . . .	46
Հայ հեղինակի աղօթքը . . . . .	47
Ժողով . . . . .	48
Հայ - եւրոպացի . . . . .	49
Նախշուն թռչուններ . . . . .	52
Ցանկութիւններ . . . . .	54

	էջ.
«Աստուած» . . . . .	56
Խօսքեր . . . . .	57
Անշոգ կեանք . . . . .	60
Հայկական բանակոիւ . . . . .	61
Պրինցիպ . . . . .	62

## Ա Բ Ա Կ Ն Ե Ր

### ՖԼՈՐԻԱՆ

1. Հայր և որդի . . . . .
2. Ճաղատների կոիւը . . . . .
3. Բաղէ և Աղաւնի . . . . .


### ԼԱՇԱՄԲՈՂԻ

1. Աղատութիւն և էշեր . . . . .
2. Երեխայ և Ճրագ . . . . .
4. Վատակ և Երեխաներ . . . . .

### ԳԵԼԼԵՐՏ

- Կկու . . . . .

ԲԱՏԻՄ ՈՒՆ	b2
Մարուք Ճանապարհ . . . . .	82
 ՊՈՒԽԾԿԻՆ	
Նկարիչ և կօշկակար . . . . .	85
 ԽԵՄՆԻՑԵՐ	
Սարդ և Ճանձեր . . . . .	87



Р. 1939г.



## ՄԵՐ ԱԹԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈվ. ԼՈՅՍ ՏԵՍԱԾ

ԱՇԽԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բանաստեղծութիւններ I Հատոր (սպառուած)	— 50
Բանաստեղծութիւններ II » (սակաւաթիւ)	1 —
Արձակ բանաստեղծութիւններ (Տուրգենեվի)	— 50
Երեք լույց (Դիմի ղը Մոպասանի)	· · · · · 50
Գրջի չԱնԱթեր	· · · · · 50

Տպագրութեան համար արդէն պատրաստ է «ՌՈՒՍ ԲԱՆԱՑԵՑՆԵՐ» խորագրով մեր թարգմանական աշխատութեան առաջին հատորը՝ մօտ 250 էջ, որը թարգմանողիս նիւթական անձնուն հասութեան պատճառով մինչև այժմ մնում է անտիպ. Այդ հատորը բաղկացած է Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Կոլցովի, Պլեշչեվի և Նիկիտինի երկերից:

Տպագրութեան համար շուտով պատրաստ կը լինի մեր նոր աշխատութիւնը՝ «ՕՏՍԱՐ ԴԱՇՏԵՐԻՑ» (Բանաստեղծութիւններ):

АРН  
2-5

MP  
an 2



Մեր հանգէն՝ Մոսկվա, Սադовая—Կարետная,  
մеблирован. комнаты Носальского, № 10.  
Александру Цатуріану.

ապարան



3384

ՀՀ Ազգային գրադարան



NL0348384